

Իսկուհիի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Ծրչ սկզբից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ		
Տարեկան	»	Ֆրանկ 18
վեցամսեայ	»	» 10

ՈՒՍՈՒՑ ԵՒ ԿՈՎՊՍՏԻ ՀԱՄԱՐ		
Տարեկան	»	րուբլի 7
վեցամսեայ	»	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՍԻ Ե
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՍԱՆՔԸ
Թերթին վարչութեան վրայ է

ՆՈՐՈՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻԷ ԲՂԹԱԿՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Ե ՈՒՂՅԱՆ ԱՌ

Վարչութիւն ՀՈՐ ՕՐ Բարբի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Զեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԻՐ Ժ. ՄԻԻՆԻԷ

ՇԱՐԱԹ 12/25 ՄԱՅԻՍ 1901

ՔԱՍՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 92

ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ ՄԸ

Պ. Յովսէփեան կը ծանուցանէ յարգելի հասարակութեան, որ մտերս իւր Եգիպտոսէ բոլորովին մեկնելուն առթիւ, իւր Պապ-Էլ-Հատիտ փողոցին, Նուպար փաշային տան մտերը գանուող (Aux articles desvoyageurs) վաճառատանց բովանդակ ապրանքները խիստ ածանց զիններով ծախու գրուած է (liquidation):

Կաշիայ անգ. մանուկներ պայուսակներ, ծածկոցներ, գլխարկներ, զուլպաներ, շապիկներ, աթոռներ ճամբու, կանանց թուակէթի պայուսակներ են. նս. որոնք գրէթէ կէս գնով պիտի ծախուին:

Կը գանուի նաև դերձակի և կօշկակարի ընտիր մեքենաներ խիստ ածանց գնով:

Սոյն լաւ կահաւորեալ վաճառատունը թէ ծախու է և թէ վարձու:

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Պոլսոյ «Արեւը» լրագիրը որուն խմբագրականները յաճախ զրական հաճոյք պատճառելէ զատ ուրիշ բան չեն, իւր վերջին թիւերէն միտն մէջ քննադատելով մեր մէջ եղած առաջնորդական ընտրութիւնները կ'ըսէ:

«Գաւառ մը առաջնորդ մը կ'ընտրէ առաջնորդը ճամբայ կ'ելնէ, կը հասնի իւր պաշտօնատեղին, փառաւոր ընդունելութիւն մը կը գտնէ հոն, և սքանչելի ալ կեանք մը կ'անցնէ քանի մը ամիս, մեղրալուսին կոչուելու արժանի: Եւ իրօք ալ մեղրալուսին մը չափ հազիւ կը տեսնուի այդ շրջանը: Անկէ անդին փոխադարձ գանգամներ, հանրագիրներ, հրաժարականներ ժողովական որոշումներ՝ և վերջ ի վերջոյ բաժանում»:

«Քանզի Գաւառական ժողովները կոյր զ կուրէն կընտրեն, իրենց առաջնորդները առանց անոնց վրայ ո և է գաղափար մը ունեցած ըլլալու, ինչպէս երկու ամիսներ առանց փոխադարձ ուսումնասիրութեան ձեռք ձեռքի կ'ուտան Աւետարանին տակ»:

Յօդուածագիրը կը յարէ՝
«Չոք գիտեր թէ Այվազեան Յովսէփ և պիսկոպոս ծանօթ էր այս ճշմարտութեան, երբ Պոլսէն Եգիպտոս մեկնեցաւ: Երանօթ

եղած ըլլար կամ ոչ, հիմա թերևս այդ մասին ամէնէն աւելի համոզուած եկեղեցականն է, առանց այլ և այլի:

Իր ժամանան օրը ո'չ փառք խնայուեալ իրեն, ո'չ ալպատիւ: Պատգամաւորութեն, մեծարանք, թափօր, խոնկ, դրամ վերջապէս բան մը պակաս չմնաց: Բայց բոլոր ատոնք այնչափ միայն տեսցին՝ որչափ որ մեղրալուսին մը կը տեսնուին թեանց մէջ: Շատ չանցած, այդ անուշիկ շրջանը անցաւ, գանգամները յայտնուեցան, ու ցրտութիւնը տակաւ տարածուիլ սկսաւ երկու կողմերուն վրայ: Բնականաբար ամէնէն շատ գանգատողը Յովսէփ եպիսկոպոս չպիտի ըլլար, ամուսնութեան, միշտ ամէնէն աւելի փաստողը, միշտ ամէնէն աւելի տուժողն է որ կը գանգատի:

Մէկդի թողով ասիէ առաջ գրուածները, հոս մէջ պիտի բերեմ հատ մը միայն՝ որ տակաւին նշխորը շարժու հասաւ մեզ:

Չասիկ օրով, մինչդեռ Եգիպտոսի ամէնէն հեռուոր անկիւններէն շատ ազգայիններ եկեղեցի փութացած են եղեր հազորութիւն անելու, խեղճերուն յանկարծ յայտարարեք է թէ չպիտի կրնան Ս. Խորհուրդին մասնակցիլ... հազորութիւնը հատած ըլլալուն պատճառաւ: Առաջին կարգին զրտնուողները միայն կրցեր են անել, ու քահանան՝ Սկիզբ վերցնելով կոնակը գարձուցեր է միւսներուն, թերևս չտեսնելու համար այն պատճառով թեանց թիւերը՝ որ յայտնուեցան նկարուած է եղեր անոնց դէմքին վրայ:

Նամակագիրը այս պարագային մէջ յանցաւոր չի նկատեր պատարագէջ քահանան այլ նոյն ինքն Յովսէփ եպիսկոպոսը, առարկելով թէ չուզի ազգու անօրինութեամբ մը կարգի բերիլ քահանաները՝ որոնց մասին տեսակ մը դիւրմբանելի պատկառանք կը տածէ, վախնալով որ ամէնքն ալ իրեն դէմ կը դառնան: Նամակագիրը բաժնի չի կրնար սխալ ըլլալ, որովհետև վարուելու այդ քառուկէ կերպը Յովսէփ եպիսկոպոս ասիէ առաջ ալ ցուցց տուած է մանաւանդ Ռոտոսթոյի մէջ, միշտ չուզելով ո' և է կտրուկ ու շղուտ հանգամանք առաջ իր որոշումներուն: Արդիւնքը տեսանք այն ատեն, և ոչ ոք կարծեմ փափաք ունի անգամ մըն ալ տեսնուիլ»:

* *

Ահաւասիկ իմ պատասխանս:
Եթէ մեր մէջ առաջնորդութեան կոչում ունեցող եկեղեցականները վրէտային, այն ատեն իրաւունք պիտի ունենայինք դատապարտելու թէ՛ Գաւառական ժողովները չեն գիտեր անոնց մէջէն արժանաւորը ընտրել, թէ փո-

խանակ արժանաւորին տալու առաջնութիւնը, կերթան որքան պագցուկղերներ կան իրենց ընտրողական բուէն անոնց կուտան:

Բայց աւաղ, ո'ւր են այդ կղերները զոր մենք չենք տեսներ: Եթէ կային թուով աննշան մի քանի կղերներ անոնք ալ անհետացան հրապարակը թողլով գրեթէ թափուր: Թերևս ոմանք առարկութիւն ընեն թէ՛ ինչո՞ւ համար հրապարակը թափուր մնացած է, չէ՞ մի որ Արմաշու գըլըրոցը իւրաքանչիւր տարի կղերներ կը հասցնէ ազգին՝ աստուածարան ու բանգէտ:

Ո'չ, ո'չ, այդ կղերները կրնան օգտակար ըլլալ իբրև քարոզիչ, իբրև աստուածարան և կամ դրագէտ, բայց երբէք չեն կրնար ծառայել իբրև առաջնորդ գաւառներու մէջ, որչափ ատեն որ տարիներու փորձառութիւնը չի գայ զիրենք գործի մարդ չընէ:

Թերևս կը յիշէք անցեալ տարի Եգիպտոսի գաւառական ժողովը երբ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը Եգիպտոսի առաջնորդ ընտրեց, սոյն վերջինն մերժեց իրեն առաջարկուած պաշտօնը, առարկելով թէ ինքն Եգիպտոսի յարմար մարդ չէր:

Այո, Առաջնորդին դերը փափուկ է, նամանաւանդ այն օրէն ի վեր որ հայերս կ'ընտրենք մեր թագաւորութիւնը, այն օրէն ի վեր որ մեր վերջին վեհապետը Լուսինեան իշխանը յանձնեցինք օտարի լուծին մենք ալ միասին անցնելով Սուլթաններու դերիշխանութեան ներքե, այդ օրէն ըսկեսալ՝ Հայ կղերին դերը մեծ եղաւ, նա եղաւ վարող մեր ներքին գործերը ինչպէս որ պիտի վարէ դեռ ևս:

Կ. Պոլսոյ Պատրիարքէն սկսեալ էն յետին քաղաքի մը առաջնորդը ամէն բան են ու ամէն բան ընելու կարող են:

Հետեալաբար մերինին նման սղգի մը մէջ որուն զեկը կղերին ձեռքըն է, առաջնորդին պէտք է ըլլայ թէ գրական մարդ է թէ վարչական, թէ խօսքի և թէ գործի մարդ:

Աւաղ սակայն, ինչ ընենք, քանի որ 40 է աւելի գաւառներ և քաղաքներ ունինք թուրքիոյ մէջ իբրև կարեւոր առաջնորդական դեմ նկատուող. որուն փոխարէն շատ քիչ թու-

ով ունինք արժանաւոր առաջնորդներ: Աւելի լաւ չէ՛ որ առաջնորդի մը ձեռքը յանձնենք առ ի չգոյէ լաւագուներն, քան թէ ըքանենք ու անառաջնորդ վիճակի մէջ թողուր գաւառ մը:

* *

Չը մեղադրենք ուրեմն Եգիպտոսի գաւառական ժողովը Յովսէփ Եպիսկոպոս Այվազեանի յանձին կատարած առաջնորդական ընտրութեան:

Այվազեան Սրբազանը վախկոտ է մենք ալ կը խոստովանինք, Սրբազանը թոյլ է ու գործունեայ չէ, բան մը որ որ ասկէց առաջ իր կենսագրութեանը մէջ ալ յայտարարած ենք ըսելով թէ՛ «Այվազեան Սրբազանը եթէ ոչ ազգեցիկ գէթ մեղմ և հաշտարար եկեղեցական մ'է»։ Բայց ասանց և ոչ մէկը արգելը չէր կրնար ըլլալ՝ Սրբազանին Եգիպտոսի առաջնորդութեան ընտրուելուն, քանի որ չունինք պատրաստուած յարմար Առաջնորդացու կղերներ. և Ազգը չէր կրնար ալ սպասել որ իզմիլեան մը իր քսորէն փրկուի, որ Մուշեղ վարդապետ մը Արապկերի գաւառին մէջ վաչական փոռձարութիւն ստանայ, ընտրելու համար գանոնք իբրև հովիւ իր գաւառին: Ազգը անմիջական կերպով Առաջնորդի մը պէտք ունէր, ստիպուած էր առ ի չգոյէ լաւագոյնին գտնէ բանգէտ կղեր մը ունենալ — կըղերներ ունինք որ բանգէտ են բայց վարչագէտ չեն — վերջ տալու համար այն անառաջնորդ վիճակին ուրկէ օգտուելով Տեղապահ Մամբրէ՛ շարունակ երկու տարի չըրած գալթակղութիւնները չէր մնացած ի ներքուստ և արտաքուստ:

Այս հիման վրայ ընտրեց ազգը Այվազեանը և կարծեմ չի սխալեցաւ Արեւելի կարծածին չափ:

Արդարև Յակոբ Աշոտի մեկնելէն վերջը երկու տարի շարունակ Առաջնորդական աթոռը թափուր մնաց մինչև Այվազեանի Գալտեան որը: Այդ ժամանակամիջոցին Մշեցի քահանայ մըն է որ՝ Առաջնորդական Տեղապահի պաշտօնը վարեց, Ազգային վարչութիւնը ներկայացուց, պաշտօնական ընդունելութեանց մասնակցեցաւ, և այդ քահանան, եթէ ամօթ չէ ըսելը, Տ. Մամբրէն էր, ուրկէ երկու տարի առաջ Պալագլիի գե-

ՀԵՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայ 24 Մայիս. — Ս. Բէթլուսի պարկէն ստոյգ աղբիւրէ կը տեղեկացնեն թէ՛ Զարը Յունիս 12ին Գօթէնհասկ պիտի մեկնի, իր առողջութեանը համար :

Ս. Բէրլին 24 Մայիս. — Օսթրիոյ զինուորայինները յարձակեցան բուստանայիններու վրայ սրնք կառուցելու 50ի չափ արտօրեալներ գէպի սահմանազուլի :

Ժամտարմաները շրջապատուեցան բազմութեամբ, ու այդ միջոցին արտօրեալներուն մեծ մասը ճամբայ դրտան փախչելու :

Կ. Պոլիս 24 Մայիս. — Ոստիկանութեան նախարարին գրասենեակէն յեղափոխական թուղթ մը գտնուեցաւ, որուն մէջ ժէճ-թուրքերը սպառնալիք կընեն թէ՛ հակառակ խիստ հրակողութեանց՝ մեծ ընդհանուր շարժում մը տեղի պիտի ունենայ :

Բոնն 24 Մայիս. — Զօրավար Պօթայի գունդերը աղիին անդին ցըրուած են՝ ժէճէրալ Պլուտի հետ ընդհարուէ խուսաբելու համար :

ԱԶԴ

Անոնք որ կը փափարին ունենալ բաշտող ստնու մը, կրնան դիմել «Նոր-Օր» ի խմբագրատունը :

1901 Յունիս 1-ից Պարիզում կուսի լոյս տեսնել հայերէն լեզուով «ԺԱՄԱՆԱԿ»

Հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական :

ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին երոպական գրական հանդէսները. առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու գեղարուեստական բաժինների վրայ :

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատկաստակաւորութիւն են յարմար բաղմաթիւ հայ և երոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացել է խմբագրութիւնը :

ԺԱՄԱՆԱԿը բաղկացած կը լինի 5 տպագրական թերթերից (80 էրես La Revue et Revue des Revues հանդիսի դերով) :

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յունիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքաչիւր ամիս :

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը տպագրէ երոպական երկերի բնագիրը երոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին. Բացում է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականների. Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ Բաժանորդագրութիւն 1901 քուականի (կիսամետր)

Ռուսաստան 3 ուրբի. Անգլիա 7 շիլին,

Ֆրանսան, Պուլկարիա. Պարսկաստան, Ռումանիա. Թիւրքիա, Եգիպտոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա 1 դոլար (սոկի) Բաժանորդագրութիւն 1902 քուականի (12 գիրք)

Ռուսաստան 10 ուրբի Անգլիա 1 ֆնտ. ստերլին ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրն.

Բաժանորդագրութիւն 1901 և 1902 քուականիների համար (15 գիրք) Ռուսիա 12 ուրբի Անգլիա 1 ֆնտ. ստերլ. և 7ը շիլ.

Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 30 ֆրնք.

Ամերիկա 6 դոլար Ամենայն տեղերից դիմել հետեւեալ հասցէով.

Paris, (France) 64 rue Claude-Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

Ա Ձ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափարի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապա-էլ-Ալիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը :

ՏՈՒՒԱ ՄԻՒԶԻԿԱԼԱՆ (ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԻՏԻՍԹԻԻՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եգիպտական արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնատարուած և Եգիպտոսի զուտարաններուն մէջ զործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է :

Հատուած և Եգիպտոսի զուտարաններուն մէջ զործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է :

ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական օրինաց և ժառանգութեան իրաւունց ծագման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և տատիճանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառները. — Մարգասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան զինը). — Ժառանգութեան մը պարտքը և պահանջը. — Ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններով :

Ժառանգութեան օրէնքին տրամադրութիւնները ուրոյն ուրոյն մեկնուած են. Գրքոյկին վերջը դրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին :

Երկրորդ մասը մօտ ժամանակէ լոյս պիտի տեսնէ՝ ինամակալութեան կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով : Գին 10 ԴԱՀ. ՈՂՁ

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութիւնը գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի զործակալն ալ, Ս. ՄԿրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս վստահութիւնը կը վայելէ :

Սոյն զործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդարի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և

Գրական Ծօնակցի, վիլ տը Բարիէ և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ, Ամսական ճնշին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պոհեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած :

Փափարողները հաճին դիմել Նիւպառի վրայ փաստարան Ռարթարի գրասենեակը :

Թղթակցութիւն և կամ դրամ զըրկել հետեւեալ հասցէին :

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵՂԱԵԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՍԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՑ ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապօրինի մեծ պողոտայի վրայ Տայիւրայի Սանիթի դիմացը, ճախիկն երկօրական գործիներու վաճառատունը :

Վերջերս Ամերիկայէն հօս եկծա հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք դ՛հայտնել մեզ դիմող Պատ. յանախարարները, գործի մաքրութեան, գիներու շափաւորութեան և ճշգրտահանութեան կողմէն :

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենալեւրջին կատարելագործուած մէթոտով :

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին :

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միուրիւն». — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
Սոյն նորակալ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրատարակութիւններ, կանոնադրութիւններ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ և ըն.
Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով և ճշգրտաւ տպագրութեամբ :
ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ